

40
ՍԱՆԴԻՄ

ԽՈՒԶԱԿ

40
ՍԱՆԴԻՄ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԻԷՍ

Գրութիւններ, որոնք ևս չեն դարձուի՝
պէտք է խրկել «Խուզակ»ի վարչութեան,
Վառնա

Administration de Khousag

Varna

Պոլիարիոյ համար տարեկան 10 ֆր.

» » վեցամսեան 5 »

Օտար երկիրներու համար տեղ. 12 »

» » » վցեսայ. 6 »

ԴՐԱՄԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Անցեալ շաբաթ երեսան ելու գրամի
համար կատարուած եղեռնագործու-
թիւն մը, որ ասկէ չորս ամիս առաջ
այս քաղքին մէջ տեղի ունեցած էր
կատարելապէս գաղտնի կերպով: Ա-
հա անոր կարճ պատմութիւնը որ
հասարակութեան մէջ կը պարտի: Հայ
գաղթականներէն երեք անձեր կը բնա-
կին գետնայարկ սենեկի մը մէջ. ա-
ստնցմէ երկուքը — Գալուստ և Արշակ-
կղբաղին շրջուն մանրավաճառութեամբ.
միւսը — Կարապետ — 45 տարու մի մարդ,
աւելի ճիշդը, մի մարդկային հրէշ՝
կղբաղի փաստաբանի մը գրասենեկին
ծառայութիւններովը. այս վերջինս,
կռահելով որ ընկերներէն Գալուստին
քով 70 — 80 ոսկիի չափ գրամ կայ, կը
մտածէ զայն մեռցնել, ստակը կորզել:
Կարապետ իր այս դիտաւորութիւնը
կը յայտնէ Արշակին, որ իր աղկանը
նշանածն է, ըսելով որ գրամը պիտի
բաժնեն մէջերնին, և նշանածն ալ Պոլ-
սէն ապսպրելով ամուսնութիւնը պիտի
կատարեն. այս կերպով երկուստեք
համաձայնութիւնը կը կատարուի, և
ոճիւրը տեղի կ'ունենայ գիշերուան մու-
թին մէջ. գիտկը կ'աներեւութացնեն

պարտէզին մէկ անկիւնը փոսի մը մէջ,
և դրամը կը բաժնեն մէջերնին. քիչ
ատենէն աղջիկն ալ Պոլսէն գալով ա-
մուսնութիւնը կը կատարուի և այս-
պէս այս եղերական տուամիս տու-
ջին արարուածը կը վերջանայ: Երկ-
րորդ արարուածը կը կատարուի հե-
տեւեալ կերպով: Այս ոճիւրէն վերջ,
աներ ու փեսայ առատ առատ կուտն
ու կը խմեն, և ամեն զինիի բաժա-
կի չեն մոռնար նաեւ զոհին կենացն
ալ ըմպելու՝ այս ալ Գալուստին կենացը
ըսելով. այսպէս կը տեւէ այս կեանքը
մինչեւ այն ատեն, երբ նորապսակ կինը
իր ոճրագործ էրիկէն լաւ ծեծ մը ու-
տելէ վերջ անմիջապէս կը լուծէ իր
վրէժը՝ գաղտնիքը կառավարութեան
իմացնելով. կառավարութիւնը անմի-
ջապէս կը ձերբակալէ ոճրագործներէն
Արշակը. իսկ Կարապետ, որ տեղէս
բացակայ կը գտնուէր՝ կը փնտռուի գեռ:
Թողունք մենք որ կառավարութիւնը
արգարութիւնը ի գործ դնէ այդ ոճ-
րագործներուն վրայ, ու մենք անցնինք
այս առթիւ քանի մը խորհրդածու-
թիւններ ընելու. նո՞ր են ասոնք. ո՞ւս-
կի կուգան. օրէ օր կը նո՞ւաղին թէ
կը բազմապատկին այս օրինակ եղեռ-
ններ. ահա այս հարցումները կը ներ-
կայանան մեր մտքին: Աշխարհի այս

մեծ թատերաբեմին վրայ դրամի համար տեղի ունեցած եղերական տուամենքու սա ոչ առաջինն է և ոչ ալ վերջինը պիտի ըլլայ. որոնք որ օրագիրներու կը հետեւին՝ շատ պիտի յիշեն նմանօրինակ բաներ. վերջինը բնաւ չպիտի ըլլայ այս հակառակ կրօնի ու բարոյականի վարդապետներու ջանքերուն, որոնք զուր տեղը փտած հինցած անօգուտ խրատներով ու քարոզներով կը հոգնին, թի կը քաշեն ատոնց առջեւ առնելու համար: Դրամի այս ահարկու տիրապետութեան, ընկերային ու քաղաքական այս յուսի ու վատ կազմակերպութեան տակ, անոնք, անհրաժեշտօրէն պիտի աճին օրէ օր երկրաչափական կանոնաւոր յառաջատուութեամբ մը, քանի՜ արդի քաղաքակրթութեան հետ մարդուն պահանջները բազմապատկին, և քանի՜ վերը ըսուած պատճառներով ապրելու միջոցները ու պայմանները նեղնան: Դրամը որովհետեւ ամէն բանէ, ժամանակէ, կեանքէ, առողջութիւնէ, ուժերուն ուժն է, այնպէս որ ամենագորեզ կայսրներն անգամ՝ անոր ահեղ զօրութեան առջեւ կը պղտիկնան ու կը խոնարհին, մարդիկ պիտի ընեն անիկա ձեռք բերելու համար դեռ շատ բաներ որ թերեւս ցարդ չէ մտածուած և ոչ մի մտքէ: Կան որ իրենց մարդկային արդար ու օրինաւոր պահանջները գոհացնելու համար չը կարողանալով ձեռք բերել այդ ոյժը՝ օրինաւոր միջոցներով չէ թէ յօժարութիւնը իրենց քով պսկսելուն համար, այլ հակառակ ամէն ճշմարիտ ջանքերու զայն այդ ձեռով ձեռք բերելու անկարելիութեան մէջ գտնուելով, յուսահատութեամբ ինքզինքնին կըսպաննեն. և կան որ լաւագոյն կը համարին սպաննել ուրիշները՝ վայելել կարենալու համար իրենք. դժբաղդաբար այս վեր-

ջինները աւելի ընդհանուր են, քան առաջինները. բայց ըստ մեզ երկուքն ալ հաւասարապէս աղէտներ են, որոնցմով կը խոցտի, կ'արիւնի, մարդկութեան սիրտը: Դրամի համար պատիւ, արդարութիւն, հայր, մայր, քոյր՝ չըլլայ և որ ըստ մեզ ամենէն աւելի մեծն է՝ մարդս իր անբռնաբարելի ազատութիւնը կը ծախէ, կը հարկադրուի գերի ըլլալ անոր, որուն ինք առնէ: Դրամի համար թեւեւ վերը պատմուածին նման ուղղակի և պոռաքող ոճիրները շատ յաճախագէտ չ'են, բայց անուղղակի կերպով ամէն օր, ամէն վայրկեան մարդիկ հազարաւոր ոճիրներ կը գործեն. ոճիրներ որոնք երբեմն աւելի մեծ են քան վերը պատմուածը, բայց քաղաքական ու ընկերական արդի կարգերը կը թոյլատրեն անոնք, և օրէնքը հոտ ոճրագործ չը փնտռէ:

Ի՞նչ ընել ուրեմն ազատելու համար բարոյական ու մտաւարական այս ամէն ազատութիւններէն, որոնք ալ ընդհանուր ըլլալ կը սկսին և մարդկութեան ներկան անտանելի դարցնելէ վերջ աւելի գէշ կերպով կապառնան անոր տալապային, ըստ մեզ ոչ այլ ինչ, եթէ ոչ ջնջել իսպառ դրամին տիրապետութիւնը և վերցնել այն հակաառութիւնը որ կայ այս ժամանակիս մէջ արտադրութեան համայնական կերպին և վայելման անհատական կերպին մէջ. ահա այն ատեն միայն պիտի կրնայ մարդկութիւնը ազատիլ իր մտաւոր, բարոյական ու ֆիզիքական զարգացումը արգելող ու կաշկանդող և ամէն տեսակ յառաջդիմութիւններուն խտրանարարը եղող կապերէն և մանել ճշմարտապէս բարեշրջման ճամբու մը մէջ. ուրկէ ընթանալով սերունդէ սերունդ պիտի սրբուի ազտերէ և պիտի ազնուանայ որքան որ կարելի է:

Ի Ն Չ Է

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարդերու եւ անասուններու մեջ (*)

Չանագան դժուարութիւններու առջեւ կը գտնուինք յաջողութեամբ ընդլայնելու եւ պարզօրէն ներկայացնելու համար մեր ընտրած նիւթը: Դժուարութիւններ, որոնց մի մասը կը ծագի նիւթին բարդութենէն, մինչդեռ միւսը՝ հայ լեզուն գիտական խնդիրներու մէջ վարելու դժուարութենէն, մասնաւոր երբ վարողն ալ կըզգայ թէ ո՛րքան թոյլ կը տիրէ այդ լեզուն (1):

Բուն խնդիրին մէջ մտնելէ առաջ անհրաժեշտ կը համարինք մէկ երկու խօսք ըսել այն մեթոտի մասին, որուն հետեւած ենք սոյն գործին մէջ եւ որով աշխատած ենք յաղթել նիւթին ներկայած դժուարութիւններուն: Պարզ է որ կրնայինք քանի մը հիմնական ենթադրութիւններու վրայ հիմնուիլ եւ անոնցմէ առաջ բերել մեր ուզած հետեւութիւնները: Օրինակի համար, ընդունելով որ բոլոր մեր հոգեկան յատկութիւնները կազմաւորապէս կապուած են մեր ջղային գրութեան հիւստեւածարանական զարգացման հետ, ուսումնասիրել մարդերու եւ կենդանիներու ջղային գրութեան բազմազան զարգացումը եւ հիմնուելով այդ ուսումնասիրութեան արդիւնքներուն վրայ եզրակացնել այս կամ այն կերպով:

Բայց այդ մեթոտին հետեւելու համար անհրաժեշտ է ունենալ անդամազննական մանրամասն ծանօթութիւններ, բան մ'որ չենք կրնար պահանջել մեր ունկնդիրներէ: Եթէ նոյն իսկ այդ արգելքն ալ չըլլար, այս մեթոտը շատ կցկտուր տեղեկութիւններ պիտի տար մեզ, քանի որ գիտութիւններու այս ճիւղը շատ թերութիւններ կը պարունակէ դեռ:

(*) Սոյն գրութիւնը բանախօսուած է Ժընէվի հայ ուսանողական ժողովին մէջ:

Ծ. Վ:

(1) Հեղինակին արտօնութեամբ փոփոխութիւն մտցուցած ենք իր լեզուն մէջ:

Ծ. Խ:

Մեր աշխատութեան իբրեւ հիմ կրնայինք ընդունել այն ենթադրութիւնը թէ մեր բոլոր հոգեկան յատկութիւնները կը ծագին հասարակ յոլական (reflexe) գործողութիւններէ, որ յատուկ են ամէն կենդանի բջիջի, եւ ապա անոնցմէ առաջ բերել վերացականութեամբ (abstraction) թէ՛ մարդերու եւ թէ՛ կենդանիներու վարմունքները եւ հոգեկան երեւոյթները: Բայց այս մեթոտը մեզ պիտի տանէր բազմաթիւ վերացական քննութիւններու, որոնք հարցը պարզելու տեղ, զայն պիտի բարդ ընէին: Սակայն իբրեւ հիմ պիտի ընդունինք մէկ ենթադրութիւն մը զոր հաստատելու համար հարկ չկայ բնագիտութեան դիմել: Այն է որ մեր ջղային գրութեան եւ ամբողջ կազմաւորութեան մէջ բոլոր միատեսակ վարմունքները եւ հոգեկան երեւոյթները կ'արտագրեն համանման ջղային հակազդեցութիւններ, եւ եթէ, ուսումնասիրելով կենդանիներու վարմունքները, գտնենք անոնց համանշանները մարդկութեան մէջ, խիստ զիւրիշ եւ պարզ կերպով կրնանք հետեւութիւններու հասնիլ: Մենք ընտրած ենք այս մեթոտը, աւելցնելով ստոր վրայ նոյն իսկ զանազան կարգի հոգեկան երեւոյթներու հոգեբանական վերլուծումը, ցոյց տալու համար անոնց մէջ եղած տրամաբանական կապը:

Գալով նիւթին դասաւորութեան, մենք ընտրած ենք երեք կէտ, որոնք ժամանակի ընթացքին մէջ եղած են, եթէ կարելի է այսպէս ըսել, կռուածադիկներ հոգեբան գիտնականներուն համար: Այսինքն բնագիտական քննականութեան եւ զգացումի կէտերը, թէ ասոնք յատուկ են բոլոր կենդանիներուն թէ անոնցմէ մին կամ միւսը՝ մասնաւոր յատկանիշը կը կազմէ միայն անասուններուն եւ մէկ քանիները՝ միայն մարդուն, կամ թէ այդ երեք ասպարէզներուն մէջ ալ նոյն աստիճանական անընդհատ զարգացումը կը տեսնուի՝ անասուններուն եւ մարդերուն մէջ:

Այս հարցումներուն է որ պիտի ջանանք պատասխանել որքան որ կը ներեն մեր տկար կարողութիւնները, քննելով կարգաւ վերեւ յիշուած երեք յատկութիւններու թէ՛ բնութիւնը եւ թէ՛ զարգացումը:

Ամէնէն առաջ հոգեբանները կ'ընդունէին

իրեւելի գնահատանութիւն, եւ այն ալ հիմնական, թէ կենդանիներու բոլոր գործողութիւնները մեքենայական են կամ անգիտակցական, թէ ազդողը միայն բնազդն է, մինչդեռ մարդերուն մէջ գիտակցութիւնն է որ կը գործէ: Այդ տեսականութիւնը ինքնին ինկաւ երբ Տարուինը հաստատեց որ բնազդը կրնայ առաջ գալ ինչպէս ցոլական (reflexe) նոյնպէս գիտակցական գործողութիւններէ՝ ժառանգականութեան շնորհիւ, եւ ցոյց տուաւ մէկ կողմէն թէ ինչպէս այդ երկու տեսակ բնազդները գոյութիւն ունին մարդերուն մէջ եւ միւս կողմէն ներկայացուց անասուններու շատ մը վարմունքներ, զորս իրեւելի բնազդ բնորոշիլ անկարելի էր:

Երախայն երբ նոր կը ծնի, գեռ գիտակցաբար գործելու կարող չէ, իրողութիւն մը զոր ցոյց կուտայ անոր ուղեղին հիւսուածաբանական կազմութիւնը, մինչդեռ նա արդէն կը սիրէ եւ կը փնտռէ իր մօր ծիծը: Երաժիշտը երբ նուագային հասուած մը կը սկսի սորվիլ, նախ ուշադրութիւն կը դարձնէ ամէն մէկ ձայնանիշի վրայ, մինչդեռ երկայն կրկնութիւններէ վերջ նա կրնայ մի եւ նոյն երգը նուագել առանց անոր վրայ մտածելու:

Կենդանիներու կեանքէն կը բերեն օրինակներ որոնք իրօք զարմանալի են: Ալիկալ կոչուած թռչուն մը (Աւստրալիա) թռիս չնստիր, այլ հաւաքելով գործարանական նիւթեր, կոյտ մը կը շինէ անոնցմէ, ուր կը թաղէ իր հաւկիթները: Այդ նիւթերը կը սկսին քայքայուիլ եւ տարրաբանական հակազդեցութեամբ առաջ կուգայ 38—40 աստիճան տաքութիւն, որը անհրաժեշտ է ձագերու զարգանալուն համար: Զշմարիտ է որ այդ ամէնը անգիտակցաբար կը կատարուի: Չեմ կարծեր որ այդ թռչունը տարրաբանական դասերու ունկնդրած ըլլայ, որպէս զի կարենար օգտուիլ գործարանական նիւթերու յատկութիւններէն:

Բայց միթէ մարդիկ ազատ են այդպիսի եւ աւելի զարմանալի անգիտակցական գործողութիւններէ: Բաւականա՞նք մէկ օրինակով, զոր կը յիշէ ձիտըրօ: «Դա մի երկրաչափ էր: Քունէն կ'արթննայ եւ նորէն կը սկսի իր կիսատ խնդիրին լուծումը շարունակել. կը հագնի լաթերը, կ'առնէ քանակը եւ մատիտը, կը գրէ հաւասարութիւններ (équation), կը հաշուէ, առանց

գիտնալու թէ ի՞նչ կ'ընէ: Ժամացոյցը կը զարնէ. նա կը նայի թէ քանի՞ն է ժամը: Կը շտապէ մի քանի նամակներ գրել, զորս վերջացնելէ յետոյ տունէն դուրս կ'ելլէ եւ կ'երթայ ճաշելու. փողոցին վրայ կը պատահի քարի կոյտերու եւ զգուշութեամբ անվնաս կ'անցնի անոնցմէ. կը ձգէ նամակները նամակատունը եւ կը մտնէ ճաշարան ուր կը հանդիպի փիլիսոփաներու մէկ ընկերութեան որոնք կը խօսին ազատ կամքի մասին ու մեր գիտնականը բարձր ձայնով կը պաշտպանէ որ մարդկային կամքը ազատ է: Եւ զինք մի անկիւն կը կանչեմ եւ ըրածին մասին հաշիւ կը պահանջեմ եւ նա բան մը չկրնար պատասխանել. ամենահասարակ մեքենայ մ'է, որ ոչ միայն իր գործողութիւններուն մէջ ազատ չէ եղած այլ ըրածներուն եւ ոչ մէկը հասած է մինչեւ գիտակցութեան: »

Այժմ պարզ է որ բնազդը՝ իր գնահատան ձեւերով չկազմեր ո՛չ անասուններու եւ ո՛չ ալ մարդերու բնորոշ (caractéristique) յատկութիւնը, այլ անիկայ՝ բնդհանուր յատկութիւն մ'է որ կախում ունի ո՛ր եւ է վարմունքի մը աւելի կամ պակաս կրկնուելէն եւ ժառանգականութենէն: Թողունք ուրիմն այս հարցը եւ զանք բանականութեան ու տեսնանք թէ արդեօք նա գոյութիւն ունի՞ անասուններու հոգեկան աշխարհին մէջ թէ ոչ:

Նարուինի, Բոմէնիսի եւ ասոնց հետեւողներու բազմաթիւ աշխատութիւններէն վերջը կարելի չէր վէճը շարունակել բնազդի մասին: Բայց կը տեսնենք որ նա կը շարունակուի ուրիշ հողի վրայ, այն է գիտակցութեան վրայ:

Ներկայիս մէջ աւելորդ է վիճել ձէքարգի մեքենական տեսականութեան մասին, որուն նայելով բոլոր կենդանիներու գործողութիւնները՝ անգիտակցական, մեքենական մի շարք շարժումներ են եւ թէ գիտակցութիւնը յատուկ է միայն մարդկային ցեղին: Մեր աշխատութեան մէջ բազմաթիւ օրինակներ ցոյց կուտան հակառակը, ուստի առանց կանգ առնելու այդ մասին կ'անցնինք Լօքի որ կ'ըսէ. «Կարելի է տարակուսիլ որ կենդանիները միացնեն եւ հանրաքանակ իրենց գաղափարները ո՛ր եւ է կերպով բայց անտարակուսելի է որ վերացականութեան (abstraction) ընդունակութիւնը գո-

յուրթիւն չունի անոնց մէջ եւ թէ մարդերու մէջ ընդհանուր զազաւարներու գոյութիւնը՝ միակ միջոցն է զանազանելու մարդիկ կենդանիներէն» :

[Շարունակելի]

ԻՆՉ Է ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Շար. նախորդ թիւին)

Գործաւորը՝ որ միայն իր բազուկներն ունի, գերին է անոր որ տէր է հողին եւ աշխատութեան գործիքներուն: Ուրեմն ստիպուած է աշխատելու, ի նպաստ ուրիշի մը: Կ'արտադրէ 10 եւ իրեն կուտան 5:

Ահա՛ երկու բառով, հարստութեան ծագումը, գրամագլուխին ծագումը:

Անոնք որ կ'ըսեն թէ գրամագլուխը—այս բառով կը հասկցուի հողը, տունը, մեքենաները եւ այլն—արդիւնք է զայն ունեցողին աշխատութեան, խնայողութեան, սուս կը խօսին անամօթաբար: Դրամագլուխը չը վճարուած աշխատութիւն է: Նորէն կրկնենք զայն, երբ գործաւորը կ'արտադրէ 10 ֆրանք, անոր կը վճարեն միայն 5, եւ միւս 5ը կ'աւելցնեն նոյն չափով աշխատցնողին գրամագլուխը:

Անոնք որ կ'ըսեն թէ ընկերվարականները գրամագլուխին թշնամիներն են, թէ անոնք կ'ուզեն գրամագլուխին ջնջումը, նորէն սուս կը խօսին: Ընկերվարականները կ'ուզեն որ գրամագլուխը—եւ մենք ըսինք թէ ի՛նչ պէտք է հասկնալ այդ բառով—արդիւնք նախորդ սերունդներու աշխատութեան, ըլլայ ամէնուն գոյքը եւ ոչ թէ մէկ քանիներուն: Իրօք, ընկերվարականները կը պատերազմին դաւաճողներուն դէմ, այսինքն այն անձերու դասակարգին դէմ որոնք ուրիշին աշխատութեամբ կ'ապրին:

Արհեստագործութեան կամ վաճառականութեան մէջ յաջողելու համար, պէտք չէ ըլլալ խելացի կամ քաջ. բա՛ւ է որ մէկը շատ ստակ ունենայ:

Երբ մին աղքատ կը ծնի, գրեթէ ստոյգ է որ աղքատ պիտի մեռնի: Կան քանի մը

հազուագիւտ բացառութիւններ, գիտենք, բայց այս բացառութիւնները կ'ըլլան հետզհետէ հազուագիւտ:

Պուրժուական նշանաբանը՝ ամէն մարդ գիտէ, է. ամէն մէկը իրեն հաւատ:

Հարստանալ, հող չէ թէ ինչպէս, այս է արդի կեանքին նպատակը:

Հօրը հարստութիւնը ժառանգելու համար, զայն պիտի սպաննէին:

Հարուստ դառնալու համար, կը ծախեն խարդախ կշիռով, կը խաբեն հասարակութիւնը:

Յաջողելու համար, չեն նահանջեր բանի մ'առջեւ եւ կը փափագին իրենց մրցակիցներուն կործանումը:

Սիրո՛ւն ընկերական դրութիւն:

Կեանքի պայքարը յուսակտուր է: Կը ճգման անդթօրէն տկարները, զժբաղդները:

Այս պայքարին արդիւնքը գիւրին է նախատեսել. որովհետեւ միայն դրամը նկատի կ'առնուի կշիռին մէջ, դրամ շատ ունեցողը կը կործանէ եւ կը ճգմէ դրամ քիչ ունեցողը:

Տեսէք թէ ի՛նչ կը պատահի արհեստագործութեան մէջ: Պզտիկ գործարանները ճգմուած են մեծերուն մրցումէն: Անանուն ընկերութիւնները կը ջնջեն անհատական վարպետները: Այս անանուն ընկերութիւնները իրենց մէջ կը կռուին եւ ամէնէն տկարները իրենց կարգին կ'իյնան:

Հողագործութեան մէջ, պզտիկ ագարակապանը կը կործանի միջոցներու պակասութենէն: Պզտիկ կալուածը՝ գրաւներով է ծանրաբեռնուած, եւ չքանալու կը դիմէ մեծ կալուածին տեղ ընելու համար: Անդղիայի եւ Իրլանտիայի մէջ—եւ այս բանը մեր մէջ ալ կը սկսի—կը վռնտին գիւղացին հողէն զօր, ինքը եւ իրենները ստոգած են իրենց քրտինքով, եւ զանոնք կը փոխանակեն կենդանիներով, ոչխարներով, կովերով եւ այլն, որովհետեւ աւելի չահաբե՛ր է այս:

Վաճառականութեան մէջ, չենք տեսներ միթէ մի եւ նոյն երեւոյթին յառաջ գալը: — Մեծ վաճառատուներու, ահադին վաճառանոցներէ մրցումէն պզտիկ կըրպակներուն ջնջուելով աներեւութանալը:

Ինչի՞ պիտի յանգին այս դրութեամբ:

Վերականգնելու նոր առատականություն մը, կալուածատէր քանի մ'ընտանիքներ, արհեստագործութեան եւ վաճառականութեան տէր, եւ օրէնք դնող մեծ մասին:

Եւ լակայն քաղաքներուն մէջ կան հազարաւոր գործաւորներ անպործ: Գիւղերուն մէջ, գիւղացիները կ'արտադրեն բազմութեամբ: Բոլոր ազատական արուեստները փակուած են: Մէկ պայտալ պաշտօնի մը համար հարիւրաւոր հարցորդներ կան:

Ինչ կայ այս ամէնուն ծայրը: Թշուառութիւնը եւ ասով քաղաքային պատերազմը, դատակարգելու պատերազմը եւ յեղափոխութիւնը: Այս համառօտ ներկայացումն պէտք է այն հետեւութիւնը քաղել որ ընկերութիւնը ինչպէս որ կազմուած է մեր օրերը, յոռի է, թէ կը յանգի ամէնէն սոսկալի գերութեան եւ թէ պէտք կայ զայն կերպարանափոխելու:

Հոտ է ընկերվարութեան ամբողջ գործը:

Բ.

Այժմ տեսնենք թէ ընկերվարականները ինչպէս կ'իմանան ընկերութիւնը բարենորոգելը:

Երբեմն կը լսենք որ կ'ըսեն թէ ընկերվարականները կ'ուզեն ինչքերը բաժնել: Ուրի է այդ եւ անտեղի:

Ինչքի բաժանումը՝ պուրժուական հին գրգռարուութիւն մ'է: Օն գնա՝ բաժնէ՛, հաւատար մասով, հողը գիւղացիներուն, գործարանները գործաւորներուն, հանքերը հանքագործներուն: Երբէ՛ք մէկը երազած չէ այսօրինակ տնտեսութիւն:

Ընկերվարականները կըսեն—եւ կ'ապացուցանեն—որ արդի վարչական ձեւը անիրաւ է, յոռի է եւ զայն փոխելու հարկ կայ:

Այսօր իշխող անհասիւն տեղ կը գնեն հաւաքականութիւնը: Ընկերվարութիւնը՝ անհասականութեան հակառակն է: Հոն ուր շահերու պատերազմ կայ այն կը գովարանէ համերաշխութիւնը:

Ինչպէս ընկերութիւնը կազմակերպուած պիտի ըլլար ընկերվարականներէն: Դժուարին է, եթէ ոչ անկարելի, նախատեսել այժմէն ինչ որ պիտի ըլլայ ընկերութիւնը հարիւր տարուան մէջ: Սակայն կարելի է ընդհանուր գիծերով նշանակել ինչ որ պիտի

ըլլայ վաղուան ընկերվարական ընկերութիւնը:

Նախ, հողը, շէնքերը, գործատուները, մեքենաները պիտի ըլլային պետութեան սեփականութիւնը, այսինքն ամէնուն, եւ պիտի կառավարուէին կա'մ պետութենէն եւ կա'մ համայնքներէն:

Հանրավարութիւն (démocratiement) կազմակերպուած պետութիւնը պիտի ներկայացնէր ի հարկ է ամբողջ երկիրը եւ ո'չ ալ եւս քանի մ'առանձնաշնորհներ:

Բոլոր արհեստագործութիւնները—երկրագործական արհեստագործութիւնը մէջը ըլլալով—պիտի փոխուէին տէրութեան վարչաձեւերու (services publics): Ադոր մէջ անկարելիութիւն մը չկայ, քանի որ այսօր արդէն մասամբ մը այսպէս է:

Պետութիւնը ներկայիս մէջ տէր է ուղիներու, ջրանցքներու: Ինչո՞ւ համար տէր չպիտի ըլլար բոլոր հողին եւ շէնքերուն: Պետութիւնը տէր է ընդարձակ անտառներու—որոնց հող կը սանի եւ որոնց արտադրանքը կը ծախէ: Ինչո՞ւ համար տէր չպիտի ըլլար մշակելի հողերու:

Պետութիւնը, Պէլժիգայի մէջ, միթէ՞ չհանգործէր երկաթուղիները, թղթատարութիւնը, հեռագիրը: Ինչ գծուարութիւն կամ անկարելիութիւն պիտի ըլլար տեսնելու այս մի եւ նոյն պետութիւնը որ չահագործէ, իբրեւ տէրութեան վարչաձեւ, անխահանութիւնները եւ բոլոր միւս արհեստագործութիւնները, հետզհետէ որ ասոնք կեդրոնացուէին քանի մը խոշոր անտառուն ընկերութիւններէ: Բնա՛ւ:

Թրանսպի մէջ, պետութիւնը միթէ՞ չհանգործէր ծխախոտի եւ լուցկիի արհեստագործութիւնը: Ռուսիայի եւ Զուիցերիայի մէջ, պետութիւնը մենավաճառ ըրած է ալքոլը: Այս բերքերուն վաճառումը կ'ըլլայ պետութեան շահուն եւ այս գրութիւնը շատ շահաբեր է հասարակաց գանձին համար:

Գերմանիայի մէջ, պարոն սը Պիզմարք չառաջարկե՞ց միթէ որ ալքոլի արհեստագործութիւնը ըլլայ պետութեան մենաշնորհը: Զյալովեցաւ, որովհետեւ պաշարելու էր Ռայխսթակի մեծ թորիչներուն դէմ, որոնք կռուեցան այս գրութեան դէմ, որովհետեւ հետեւանքը պիտի ըլլար իրենցմէ քաշել հանել այն բազմաթիւ միլիոնները

զորս կը շահին ամէն տարի, իրենք չահագործելով այս արհեստագործութիւնը:

Ուրեմն անկարելի չէ փոխակերպել պետութեամբ, մասնաւոր արհեստագործութիւնները տէրութեան վարչաճիւղերու, քանի որ այդ փոխակերպութիւնը այսօր գոյութիւն ունի մասամբ մը:

Բայց թերեւս պիտի առարկեն թէ պետութիւնը կարող է այս պաշտօնը կատարելու:

Բացէ ի բայց կը պատասխանենք թէ այո՛:

(Շարունակելի)

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՆՆԴԱՇՈՒԹԻՒՆ

(Շար. Լախուրդ թիւհն)

Ա.

Ի՞նչ է Փիլիսոփայութիւնը

Ի՞նչ ենք մենք. ո՞ւրկէ կուզանք. ո՞ւր կ'երթանք. ինչո՞ւ համար աշխարհիս վրայ ենք: Առաջին օրն որ մէկը ինքնիրեն ըրաւ այս հարցումները եւ ջանաց գէշ աղէկ զանոնք լուծելու, այն օրը սկսաւ փիլիսոփայութիւնը: Եւ իրօք, փիլիսոփայութիւնը՝ ամէնէ առաջ, ամենամեծ մարդկային գիտութիւնն է: Իր առարկան՝ մարդն է: Իր գլխաւոր առաջադրութիւնն է ճանչնալ մարդուն բնութիւնը, անոր ծագումը եւ վախճանը, որուն պիտի գիմէ մարդը:

Ճշգիւ խօսելով, բոլոր այս հարցումները կը վերածուին մէկի մը—ի՞նչ ենք մենք: Որովհետեւ եթէ մենք մեզ լաւ ճանչնայինք, պիտի գիտնայինք թէ ո՞ւրկէ կուզանք, քանզի անկարելի է որ մեր մէջ չունենանք մեր ծագման վերաբերեալ նշաններ. որովհետեւ անկարելի է որ մեր մէջէն բան մը չյայտնէ մեր գոյութեան պատճառը, պիտի գիտնայինք թէ ո՞ւր կ'երթանք: Փիլիսոփայութիւնը՝ իր իսկութեանը նայելով, կրնայ ուրեմն սահմանուիլ մարդուն գիտու-

թիւնը, եւ հին իմաստունները իրաւունք ունէին ըսելու որ փիլիսոփայութեան բոլոր պատուէրները կ'ամփոփուէին այս միակ պատուէրին մէջ—ճանչցի՛ր դուն քեզ:

Բայց մարդս եւսկ մ'է: Մարդուն ի՞նչ ըլլալը գիտնալ աշխատելէ առաջ, պէտք է ուրեմն բացատրել թէ ի՞նչ կը նշանակէ եւսկ բառը: Խնդիրը աստիճան մը կը բարձրանայ. բայց այս աստիճանէն անդին ա՛լ բան մը չկայ, որովհետեւ էակէն անդին ա՛լ միայն կայ ոչ-էակը կամ անէութիւնը: Միայն գիտենք որ էակին կամ էութեան ընդհանուր գիտութիւնը՝ փիլիսոփայութեան չուկէան է, քանի որ, առանց էակին գիտութեան, մարդկային գիտութիւնը անկարելի պիտի ըլլար:

Կայ նաեւ երկրորդական գիտութիւն մը, առանց որուն փիլիսոփայութիւնը չպիտի կրնար քայլ մ'առնել—խնայողութեան կարողութիւններուն եւ ճշմարտութեան հասնելու համար հետեւելիք մեթոտներու գիտութիւնն է. մէկ խօսքով, գիտութեան գործիքներուն եւ եղանակներուն գիտութիւնն է:

Ի՞նչ պիտի ըսէին աստղաբաշխի մը համար եթէ չգիտնար հեռագիտակի մը ի՞նչ ըլլալը կամ զայն գործածելու եղանակը: Մենք կ'ուզենք գիտնալ թէ ի՞նչ է մարդը, ի՞նչ են էակները, բայց ինչո՞վ պիտի ուսումնասիրենք էակները եւ մարդը—մեր մտաւորական կարողութիւններով, մեր ուշադրութեամբ, մեր խորհրդածութեամբ, եւ այլն, եւ այլն: Բացայայտ չէ՞ որ, ամէն բանէ առաջ, մենք տեղեկանալու ենք այս կարողութիւններուն նոյն իսկ բնութեան մասին: Այս պիտի ըլլայ սակայն եւ այնպէս առաջին քայլ մը մարդկային գիտութեանը մէջ, որովհետեւ այս կարողութիւններն են նոյն իսկ մարդը, նկատուելով իրեւ խելացի էակ:

Մենք պիտի ուսումնասիրենք ուրեմն այս կարողութիւնները. բայց, գեռ առկէ առաջ, անհրաժեշտ չէ՞ միթէ որ մենք գիտնանք թէ ի՞նչ կը նշանակէ ուսումնասիրել: Կան ուսումնասիրելու աղէկ եւ գէշ եղանակներ, ինչպէս կան դարբնելու եւ տաշելու աղէկ եւ գէշ կերպեր. աշխատինք գտնել թէ ո՞րն է լաւագոյնը:

Փիլիսոփայութիւնը՝ որ ամէնէն աւելի մարդուն գիտութիւնն է կամ մարդաբանու-

թիւնը, է ուրեմն նաեւ էական գիտութիւնը կամ Խաւարութիւնը, մտաւորական կարողութիւններուն գիտութիւնը կամ հոգեբանութիւնը, եւ մեթոտներուն գիտութիւնը կամ մեթոտաբանութիւնը որ է ընդհանուր գիտութիւն մը եւ որուն մէկ ճիւղն է տրամաբանութիւնը:

Փիլիսոփայական զանազան գրութիւնները քննութիւնէ անցնելու ատեն, ուրեմն զանոնք պիտի քննենք այս զանազան տեսակէտներով:

Նաեւ քննազանցութիւն կ'անուանեն աւանաբարձր սկզբունքներու ամբողջութիւնը, որոնցմէ կը բաղկանան փիլիսոփայութեան այս երեք բաժանումները, եւ այս անունը կ'աւելուած է երկու բառերէ որոնք կը նշանակեն—զգայարաններու տակ չիջնող իրեր: Խեղճ ստուգարանութիւն, որովհետեւ զգացողութիւնը միշտ գեր մը կը խաղաղ մեր այն մտածումներուն մէջ որոնք ամէնէն աւելի օտար կ'երեւին զգացողութեան: Նաեւ սովոր են քառոյցագիտութիւնը նկատելու իբրեւ փիլիսոփայական բունին գիտաւոր ճիւղերէն մէկը. վերլուծական պակասութեան մ'արդիւնքն է ասիկայ: Արդարեւ բարոյագիտութիւնը ուրիշ բան չէ բայց եթէ այն կերպերուն գիտութիւնը, որոնցմով մենք կրնանք ըլլալ աւելի լաւ եւ աւելի սիրող, եւ հետեւաբար մեթոտներու ընդհանուր գիտութեան ստորաբաժանումներէն մէկն է լոկ, ճիշդ ինչպէս տրամաբանութիւնն է այն կերպերուն գիտութիւնը, որոնցմով մենք կրնանք աւելի գիտուն ըլլալ, եւ ինչպէս արտեսաստրաբանութիւնն այն կերպերուն մասնաւոր գիտութիւնը, որոնցմով մենք կըրնանք ըլլալ աւելի ուժով, աւելի կարող եւ աւելի հարուստ:

Հիմայ պէտք է որ հասկցուի թէ ինչու՝ փիլիսոփայութիւնը պերճօրէն անուանուած է գիտութիւններուն գիտութիւն կամ ամենամեծ ընդհանուր գիտութիւն: Արդարեւ, բոլոր գիտութիւնները իրմէն կ'ելլեն, ամէնը իր մէջ կը գտնեն իրենց չուկէտը, որովհետեւ ամէնն ալ կը զբաղին էականերով՝ քննութեամբ ասոնք իրենց մասնաւոր երեւոյթներէն ոմանց մէջ, եւ ասոր համար է որ անոնք կը կրեն մասնաւոր գիտութիւններու անունը: Ինչո՞վ կը զբաղի երկրաչափը եթէ ոչ մարմիններով՝ տարածութեան կողմէ: Ինչո՞վ կը զբաղի բժիշկը, բնա-

գետը, տարրաբանը, եթէ ոչ էականերով որքան որ ասոնք հիւանդ են, էականերով որքան որ ասոնց յատկութիւնները կ'ազդեն եւ կը հակազդեն իրարու վրայ: Ամէնը կը զբաղին ուրեմն էականերով, ամէնը կ'ընդունին ուրեմն նշանաբանը, սանկ ըսելով, էական ընդհանուր գիտութիւնէն:

Ասկէ վերջ, պէ՞տք է զարմանալ եթէ գիտութիւններուն ամբողջ գրութիւնը տակնուվրայ կ'ըլլայ երբ փիլիսոփայութիւնը ինքը կը փոփոխէ իր հաստատումները: Բայց փիլիսոփայութեան ազդեցութիւնը կը տարածուի գիտութիւններուն սահմանէն շատ անդին. նա կը արիւմտարկային ընկերութիւններուն, եւ կը յայտնէ քաղաքական ու ընկերական յեղափոխութիւններով այն յաջորդական փոփոխութիւնները, որոնց կ'ենթարկէ իր յատուկ գաւառանքները:

Փիլիսոփայութիւնը՝ մարդուն գիտութիւնն է: Ենթադրեցէք որ հասնի սա եզրակացութեան թէ երկու տեսակ կայ մարդերու, մին եղած է հրամայելու համար եւ միւսը՝ հնազանդելու համար: Նոյն իսկ այն կէտին, կ'երեւին տէրեր եւ գերիներ: Ենթադրեցէք որ՝ մեղմացնելով իր առաջին բանաձեւը, գոհանայ ըսելով թէ ամէն լաւ կ'աղմակերպուած ընկերութեան մէջ ոմանք պարտին ամբոխներուն համար խորհիլ եւ ամբոխները պարտին խորհողներուն համար աշխատիլ. եւ դուք պիտի ունենաք մտաւորական ամենախորիւս ազնուապետութեան ճիշդ քովը ամէնէն անբուժելի սովորութեան նուիրուած անժառանգներ:

(Շարունակելի)

Վ Ր Ի Պ Ա Կ

Ա. Թիւին մէջ. — Դրագիրին մէջ հինգերորդ հատուածին սկիզբը «Իր գործելու միջոցները» պէտք է ըլլայ «Իր գործելու եւ զանախները»:

«Անգլիացի բարեգործներու» տակի շարունակելին պէտք է ըլլայ «Ինչ է ընկերվարութիւն»ին տակը:

«Փիլիսոփային պատմութեան» մէջ «գիտունները կը ձգեն քարաէսները» պէտք է ըլլայ «գիտունները կը գծեն քարաէսները»:

[ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ] ՆԻԳՕԼԱ ՏՐԱԿՈՒԼԷՅ
ОТГОВОРНИКЪ.: Никола Д. Драгулевъ